ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/93

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Ա. Միերյանի և Կ. Թոփուզյանի (լիազորագիր՝ տրված 15.03.2022թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.03.2022թ. թիվ 26/26-1/4095-2022 գրությամբ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 03.03.2022թ. թիվ 181 գրության հիման վրա 10.03.2022թ. թիվ 26/26-1/4095-2022 գրությամբ նախաձեռնել է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/93 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր խնդրել են Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին քննության առարկա դարձնել այն փաստը, որ սույն ընթացակարգը նախաձեռնվել է ժամկետի խախտմամբ:

3. <u>«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.03.2022թ. թիվ 181 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայք ձեռք բերելու նպատակով գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով մրցույթին 17.12.2021թ. էլեկտրոնային եղանակով հայտ էր ներկայացրել նաև «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. թիվ 4 որոշմամբ 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից էր հայտարարվել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետով, 10.02.2022թ. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին էր ներկայացրել «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5-2» ծածկագրով գնանշման հարցման հրավերի պայմանագրի նախագիծը, որակավորման ապահովումը, պայմանագրի ապահովումը և առաջարկել

հաստատել այն և հրավերով նախատեսված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ:

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն հրավերով սահմանվաշ ժամկետում և կարգով ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ է ներկայացրել միայն 3-րդ չափաբաժնի համար պայմանագիր, իսկ 5-8-րդ չափաբաժիններով պայմանագիր չի ներկայացրել:

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ հարցը քննարկելու համար Ձեզ ենք ուղարկում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հայտի և գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. թիվ 4 արձանագրության պատճենները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/93 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 3-րդ, 5-8րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգի հրավերի 8.20 կետի համաձայն «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ վերջինս 5-8-րդ չափաբաժինների մասով կնքված պայմանագիր Պատվիրատուին չի ներկայացրել:

4. «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 03.03.2022թ. թիվ 181 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 և 6 արձանագրությունները, ինչպես նաև Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը:

5. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2022թ. թիվ 26/26-1/4095-2022 գրությունը, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 03.03.2022թ. թիվ 181 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:*** Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին***, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 3-րդ, 5-8րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգի հրավերի 8.20 կետի համաձայն «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ վերջինս 5-8-րդ չափաբաժինների մասով կնքված պայմանագիր Պատվիրատուին չի ներկայացրել:

«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 03.03.2022թ. թիվ 181 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 և 6 արձանագրությունները, ինչպես նաև Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, որով կապացուցվեր Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***Պատվիրատուի կողմից Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը ներկայացնելու վերաբերյալ ծանուցած լինելը,*** **Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:**

Մինչդեռ՝ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությանը պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում՝ Կարգի և Ընթացակարգի հրավերի համաձայն, Պատվիրատուի կողմից ընտրված մասնակցին՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին, պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը ներկայացնելու վերաբերյալ ծանուցում ուղարկելը, այսինքն՝ Ընկերության կողմից պայմանագիր կնքելու վերաբերյալ պատշաճ

ծանուցված լինելը, քանի որ ծանուցումն ուղարկելուց հետո է միայն հոսում Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 աշխատանքային օր ժամկետը, ինչը և չպահպանելու դեպքում Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, որի արդյունքում ի հայտ է գալիս Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկի և պայմանագրի նախագծի ներկայացման վերաբերյալ պատշաճ ծանուցած լինելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել դրա գոյության փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.03.2022թ. թիվ 26/26-1/4095-2022 գրությամբ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**